(Կազմված է 2022 թվականի դեկտեմբերի 1-ին,
բաղկացած է 5 թերթից)
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
Օրինակ 1

Հաստատված է՝
Չարենցավան համայնքի ավագանու
«Միասնական համայնք դաշինք» խմբակցության
2022 թվականի դեկտեմբերի 1- ի նիստում
N 69-Ա որոշմամբ
Խմբակցության ղեկավար՝

_____Ն.Վարդանյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԴԱՇԻՆՔ » ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ք.Չարենցավան
2022թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի (այսուհետ՝ Համայնք) ավագանու «Միասնական համայնք դաշինք» խմբակցությունը (այսուհետ՝ Խմբակցություն) ստեղծվել է 2022 թվականի դեկտեմբերի 1-ին օրենքի ուժով գումարված համայնքի ավագանու 1-ին նստաշրջանի բացման օրը 1-ին նիստում N 69-Ա որոշմամբ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 66-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված. «Ավագանու անդամների մանդատների բաշխմանը մասնակցած կուսակցության, կամ կուսակցությունների դաշինքի առաջադրմամբ ընտրված ավագանու անդամներն ընդգրկվում են նույնանուն խմբակցություններում» սկզբունքին համապատասխան:

1.2 Խմբակցությունն առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Օրենքով, այլ օրենքներով, իրավական ակերով, Համայնքի ավագանու կանոնակարգով և սույն կանոնադրությամբ:

1.3 Խմբակցության անվանումն է՝ «Միասնական համայնք դաշինք» Խմբակցություն:

1.4 Խմբակցությունն ունի իր անվամբ ձևաթղթեր՝ առանց Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերի:

1.5 Խմբակցության գտնվելու վայրն է՝ ՀՀ Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Դեմիրճյան հրապարակ 1, Չարենցավանի համայնքապետարանի վարչական շենք:

1.6 Խմբակցության նպատակն է համախմբել Խմբակցության անդամներին: Իր կողմից ծավալած գործունեության, կատարված աշխատանքների միջոցով մշտապես աջակցել համայնքի ավագանու գործունեությանը Համայնքում՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենսդրության դրույթներին համապատասխան:

2. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

2.1 Խմբակցությունն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի և խորհրդակցությունների միջոցով:

2.2 Խմբակցությունը համայնքի ղեկավարին կամ նիստը վարողին գրավոր ներկայացնում է իր կանոնադրությունը, անվանումը, կազմը, ղեկավարի և քարտուղարի անունները, ազգանունները, որոնք նիստը վարողը հրապարակում է Ավագանու առաջիկա նիստում:

2.3 Ավագանու անդամը կարող է դուրս գալ Խմբակցությունից՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով Խմբակցության ղեկավարին:

2.4 Խմբակցության գործունեությունը դադարում է, եթե դրա բոլոր անդամները դուրս են գալիս Խմբակցությունից, և վերականգնվում է, եթե նրա կազմում ընդգրկվում է դրա իրավասությունն ունեցող առնվազն մեկ անդամ;

2.5 Խմբակցության կազմի փոփոխության, ինչպես նաև գործունեության դադարման և վերականգման մասին գրավոր տեղեկացվում է համայնքի ղեկավարը, որի մասին Ավագանու առաջիկա նիստում հայտարարում է համայնքի ղեկավարը կամ Ավագանու նիստը վարողը:

3. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԸ

3.1 Խմբակցության ղեկավար մարմինը Խմբակցության նիստն է :

3.2 Խմբակցության առաջին նիստում Խմբակցության անդամների կազմից ընտրվում են Խմբակցության ղեկավար և քարտուղար՝ մինչև մեկ տարի ժամանակահատվածով: Նրանց լիազորությունների ավարտին հաջորդող ամսվա առաջին կեսում Խմբակցությունն ընտրում է նոր ղեկավար և քարտուղար, եթե մինչև այդ Խմբակցությունը որոշում չի ընդունել նախկին ղեկավարի և քարտուղարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու կամ երկարաձգելու մասին: Խմբակցության ղեկավարի կամ քարտուղարի լիազորությունների դադարեցման դեպքում նոր ղեկավարը և քարտուղարն ընտրվում են 10-օրյա ժամկետում , իսկ լիազորությունների 1-ամսյա ժամանակահատվածը հաշվարկվում է արտահերթ ընտրության օրվանից սկսած; Ավագանու հանձնաժողովներում նախագահի պաշտոն զբաղեցնողները Խմբակցության ղեկավարի հավակնորդների մեջ չեն մտնում:

3.3 Նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են Խմբակցության անդամների կեսից ավելին: Նիստում որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող Խմբակցության անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

3.4 Խմբակցության նիստերը տեղի են ունենում ավագանու հերթական նիստերից մեկ օր առաջ:

3.5 Հերթական նիստի անցկացման ժամանակի, վայրի և օրակարգի մասին Խմբակցության անդամները ծանուցվում են հեռախոսազանգի, կարճ հաղորդագրության կամ էլեկտրոնային փոստի միջոցով՝ նիստից առնվազն 2 օր առաջ:

3.6 Արտահերթ նիստ հրավիրում է Խմբակցության ղեկավարի կամ Խմբակցության անդամների 1/3-ի նախաձեռնությամբ՝ նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետում:

3.7 Արտահերթ նիստի անցկացման դեպքում ծանուցումն ապահովում է առնվազն 1 ժամ առաջ ՝ էլեկտրոնային փոստի և հեռախոսազանգի միջոցով:

3.8 Խմբակցության նիստերին, բացի Խմբակցության անդամներից, կարող են մասնակցել քննարկման ենթակա հարցերին իրազեկ, Խմբակցության որոշմամբ հրավիրված անձինք և Խմբակցության փորձագետը:

4. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ

Խմբակցության ղեկավարը.

4.1 կազմակերպում է Խմբակցության գործունեությունը, նախապատրաստում և վարում է Խմբակցության նիստերը, վերահսկում է Խմբակցության որոշումների և հանձնարարականների կատարումը,

4.2 կազմում և Խմբակցության հաստատմանն է ներկայացնում Խմբակցության նիստերի օրակարգի նախագծերը,

4.3 իր հայեցողությամբ Խմբակցության քննարկմանն է ներկայացնում Խմբակցության անունով ստացված դիմումները և առաջարկությունները,

4.4 ընթացք է տալիս և պատասխանում է Խմբակցության անունով ստացված դիմումներին և բողոքներին,

4.5 Խմբակցության ղեկավարը կամ նրա կողմից լիազորված Խմբակցության անդամը ներկայացնում է Խմբակցությունը, Համայնքի ավագանու նիստերում , հասարակական, հասարակական-քաղաքական և այլ կազմակերպություններում, Խմբակցության գործունեության հետ կապված

ցանկացած այլ փոխհարաբերություններում և զանգվածային լրատվության միջոցների հետ հարաբերություններում,

4.6 Անհրաժեշտության դեպքում Համայնքի ավագանուն տեղեկատվություն է ներկայացնում Խմբակցության գործունեության վերաբերյալ,

4.7 տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ Խմբակցության անդամներին

4.8 գումարում է Խմբակցության արտահերթ նիստ,

4.9 ստորագրում է Խմբակցության որոշումները, վերահսկում է Խմբակցության ղեկավարի որոշումների և հանձնարարականների կատարման ընթացքը,

4.10 անհրաժեշտության դեպքում Համայնքի ավագանու նիստում հարցի քվեարկությունից առաջ կարող է դիմել մինչև 15 րոպե տևողությամբ ընդմիջում հայտարարելու համար :

4.11 ներկայացնում է «Միասնական համայնք դաշինք» Խմբակցության շահերը Չարենցավանի համայնքապետարանում:

4.12 ընդունում է Խմբակցությունից դուրս գալու Խմբակցության անդամի գրավոր դիմումը և ներկայացնում համայնքի ղեկավարին սահմանված կարգով:

4.13 Ժամկետային պայմանագրով աշխատանքի է ընդունում Խմբակցության գործավարին և փորձագետին՝ տալով համապատասխան հանձնարարականներ, և նրանք պարտավոր են աջակցել Համայնքի ավագանու աշխատանքներին,

4.14 Քարտուղարի հետ միասին համակարգում է Խմբակցության գործավարի և փորձագետի աշխատանքները,

4.15 Խմբակցության անդամների հետ համատեղ քննարկում և որոշում է մշտական և ժամանակավոր հանձնաժողովների կազմավորման հարցը:

4.16 Հաշվետու է Խմբակցությանը և հանրությանը:

5. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

Խմբակցության քարտուղարը.

5.1 Խմբակցության ղեկավարի բացակայության դեպքում կամ վերջինիս լիազորմամբ կատարում է նրա լիազորությունները,

5.2 Կազմակերպում է Խմբակցության գործավարությունը, նիստի օրակարգը, նիստերի արձանագրությունները, անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստումը,

5.3 Խմբակցության դիրքորոշման հիման վրա նախապատրաստում է ստացված դիմումների, բողոքների և առաջարկությունների պատասխանները,

5.4 վարում է Խմբակցության անդամների Համայնքի ավագանու նիստերին մասնակցության հաշվառումը,

5.5 Խմբակցության նիստում ներկայացնում է ամփոփ հաշվետվություն նախորդ նիստի ժամանակ ստացված հանձնարարականների կատարման ընթացքի և Խմբակցության անդամներին հղած դիմումների վերաբերյալ, ինչպես նաև՝ Խմբակցության նիստում ամփոփիչ հաշվետվություն է ներկայացնում իր լիազորությունների ավարտին,

5.6 Վերահսկում է Խմբակցության անդամներին անհրաժեշտ նախագծերով ու փաստաթղթերով ապահովումը,

5.7 հետևում է Խմբակցության աշխատակազմի անդամների պարտականությունների կատարմանը, վարում է Խմբակցության աշխատակազմի ամենօրյա հաշվառումը,

5.8 կազմակերպում է Խմբակցության պահոցի պահպանման աշխատանքները:

5.9 հաշվետու է Խմբակցությանը և հանրությանը:

6. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԸ

Խմբակցության անդամը.

6.1 պարտավոր է մասնակցել Խմբակցության նիստերին, իսկ բացակայության դեպքում՝ այդ մասին նախապես տեղյակ պահել Խմբակցության ղեկավարին կամ քարտուղարին,

6.2 պարտավոր է կատարել Խմբակցության որոշումները և սույն կանոնադրության պահանջները,

6.3 Համայնքի ավագանու նիստերից բացակայելու դեպքում պարտավոր է դրա պատճառների և իր գտնվելու վայրի մասին տեղյակ պահել Խմբակցության ղեկավարին կամ քարտուղարին,

6.4 հայտնում է իր դիրքորոշումը Խմբակցության նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ,

6.5 քվեարկությամբ մասնակցում է որոշումների ընդունմանը,

6.6 Խմբակցության անդամի անդամությունը դադարում է՝

ա) նրա դիմումի համաձայն

6.7 բ)եթե նա մեկ հերթական նստաշրջանի ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է Խմբակցության և ավագանու նիստերի կամ քվեարկությունների ավելի քան կեսից կամ հանձնաժողովի նիստերի կեսից:

գ) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա,

դ) եթե պարբերաբար խախտել է սույն կանոնադրության պահանջները կամ չի կատարել Խմբակցության նիստի որոշումները:

7. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ՓՈՓՈԽՈՒՄԸ

7.1 Խմբակցության կանոնադրությունն ընդունվում է, ինչպես նաև դրանում փոփոխությունները կատարվում են Խմբակցության ղեկավարի կամ անդամի առաջարկությամբ՝ Խմբակցության որոշմամբ:

7.2 Խմբակցության կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունները Խմբակցության նիստում քննարկվում են արտահերթ:

7.3 Սույն կանոնադրությունը ուժի մեջ է մտնում ստորագրման օրը: